

# Պարզ արտադրիչներ

Թվերի տեսությունից հայտնի է, որ ցանկացած բնական թիվ կարելի է ներկայացնել պարզ թվերի արտադրյալի տեսքով: Տրված է մի  $n$  բնական թիվ: Հարկավոր է գրել ծրագիր, որը գտնի  $n$ -ից մեծ ամենափոքր թիվը, որը կազմված է ճիշտ նույն պարզ թվերից, ինչ  $n$ -ը:

## Մուտքը

Մուտքում տրված է 1-ից մեծ և 1000000-ը չգերազանցող մի ամբողջ թիվ:

## Ելքը

Ելքում պետք է արտածել պահանջվող թիվը, եթե այն չի գերազանցում 2000000-ը: Եթե այդպիսի թիվ գոյություն չունի, պետք է արտածել Not Exist! արտահայտությունը:

## Օրինակներ

Մուտքը.

10

Ելքը.

20

Մուտքը.

12

Ելքը.

18